Հարգելի՛ պարոն Լ. Պետրոսյան

Տեղեկացնում ենք Ձեզ,որ հայտարարվում է մրցույթ ՀՀ Կոտայքի մարզի «Մրգաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հանրահաշիվ (7,5դասաժամ), երկրաչափություն (4,5դասաժամ), կենսաբանություն (10դասաժամ), Ինֆորմատիկա (4դասաժամ), ՆԶՊ (5 դասաժամ), ԹԳՀԳ (8դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝
ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը՝ փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են մայիսի 26-ից մինչեւ հունիսի 12-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա հունիսի 13-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Կոտայքի մարզի Մրգաշենի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ.Մրգաշեն, 2-րդ փ., 1-ին փակուղի N1:
Տեղեկությունների համար զանգահարել՝ (0224)6-34-20, (098)65-43-28 հեռախոսահամարներով:

Դպրոցի տնօրեն՝ Լ.Բաղալյան